

մատնէ թէ Եւրոպայի մէջ չի նուած է, նմանողութեամբ եւրոպական իշխաններու կնիքին: Այս կնիքը շատ մեծ նմանութիւն ունի Ֆուայի կոմս Գաստոն Գ-ի կնիքին, որ հրատարակուած է Ֆրուասարի պատկերազարդ տպագրութեան մէջ, եր. 632: Գծախտարար չենք դիտեր, թէ ի՞նչ եղաւ Լեւոնի մատանին, որ կը կրէր Հայոց արքայական նշանները, ինչպէս ասեսանք եր. 62, եւ որ իր կողմէ յանձնուած էր Գարգիլի: Ասիկա լոյս մը կրնայ սփռել Լեւոնի գործածած զինանշաններուն վրայ:

Միակ վաւերագիրն որ Հայոց վերջին թագաւորին կնիքով եւ միանգամայն ստորագրութիւնով հասած է մեզ՝ Մագրիդի Դիւանարանին մէջ պահուած 2a — 305 — 60 թիւ հրովարտակն է, որուն թարգմանութիւնը տուած եմ գրքիս մէջ, եր. 96: Այս հրովարտակին տակ Լեւոն իր ձեռքով գրած է՝ Roy. Lyon: V: r — այսինքն՝ « Լեւոն թագաւոր Ե. ի (չխող = Régnant) »: Զարմանայի է որ Ֆրանսայի մէջ գործածած պաշտօնագրերուն վրայ իր ստորագրութիւնը չէ գրած, այլ միայն կնիքը, ինչպէս ասեսանք օրինակները:



ԻԷ

Լեւոնի պատկերն ու կիսարձանը

Մեր վերջին թագաւորին պատկերը, որչափ գիտեմ, երեք տեղ միայն հրատարակուած է. 1) սպաներէն քառահատոր գրքի մը մէջ — *Historia de la villa y corte de Madrid*, որուն հեղինակներն են՝ José Amador de los Rios y Juan de Dios de la Rada y Delgado, տպ. Մագրիդ 1860, — թերեւս Լեւոնի Մագրիդ գտնուած ժամանակ պատրաստուած նկարի մը վրայէն չի նուած. 2) Լեւոնի մի եւ նոյն պատկերը ներկայացնող լուսանկար մը, գնուած Մագրիդի մէջ, չնորհիւ պ. Լեւոն ճէփահիրճեանի. 3) Պարիսի Մասեաց Աղաւնի հանդէսին մէջ: Գրքիս մէջ գրուած պատկերներէն եր. 37-ինը պատրաստուած է Մագրիդէն բերուած լուսանկարին վրայէն, որ՝ ինչպէս ըսի, ճիշտ նման է